

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս

Բարեխնամ Պատրիարք Հայոց Ս. Երուսաղէմի

Երուսաղէմ

Ամենապատիւ եւ Սիրելի Եղբայր ի Քրիստոս,

Նոր Տարուան եւ Փրկչի Ս. Ծննդեան հրաշայի Տօնին առ-
թիւ Ձերդ Ամենապատուութեան կը ներկայացնենք Մեր սրտալից
եւ ջերմ շնորհաւորութիւններն ու լաւագոյն մաղթանքները:

Ի խորոց սրտի կ'աղօթենք, որ Բարձրեայն Աստուած պար-
գեւէ Ձեզի քաջառողջ և երջանկալից երկար կեանք եւ լիակատար
յաջողութեամբ պսակէ եկեղեցանուէր Ձեր բոլոր նիզերն ու ջան-
քերը:

Թող Աստուած հարցն մերոց անշարժ եւ անասան պահէ ու
պահպանէ Հայց. Ս. Եկեղեցին եւ բարգաւառն ու ծաղկեալ կեանք
պարգեւէ հաւատացեալ Հայ ժողովուրդին ի սփիւռս աշխարհի:

Մնամ եղբայրական սիրոյ ջերմ ողջունքիւ

Աղօթարար

ԽՈՐԷՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ

Անքիլիաս,

15 Դեկտեմբեր 1968

Համպլեթի Պալատ,
Լոնտոն

Ս. Ենունդ, 1968

Ձերդ Ամենապատուութիւն,
Միրեցեալ եղբայր ի Քրիստոս,

«Քրիստոս ծնաւ ի Բեթղեհէմ»:

Հրեշտակներու աւտիսը դարձեալ կը հնչէ աշխարհի վրայ, մինչ Մեր Տիրոջ Ենունդեան տօնը կը մօտենայ: «Երբ-ամէ Բեթղեհէմ, տեսնելու համար այն՝ ինչ որ պիտի պատահի»:

Այդ գիշեր, պարզամիտ հովիւներուն եւ Բեթղեհէմի բազմաւթիւններուն հետ, քրիստոնեաներ աշխարհի բոլոր կողմերէն կ'աճապարեն դէպի Մանր՝ պաշտելու համար Մանուկ Թագաւորը: Անօգնական է Ան եւ պտկած մաւրի մը մէջ, եւ սակայն Ան է Փրկիչը աշխարհին: Ան խաղաղութեան իշխանն է, որ կը ծնի մարդկային չար ծրագիրներու պայքարներով տառապող աշխարհի մը մէջ:

Բագում դարեր անցած են առաջին Ենունդէն ի վեր, եւ տակաւին աշխարհը կը մերժէ մտիկ ընել Տիրոջմով մարմնացած փրկութեան աւտիսին: Ժողովուրդներ կը պատերազմին ժողովուրդներու դէմ եւ գաղթականներ կը փախին իրենց տուներէն: Տակաւին, «տեղ չկայ օք-եւամին մէջ»:

Մինչ կը յիշենք հազարաւոր տառապողները, մօտենամք նորածին մեր Փրկչին շնորհակալութեամբ եւ զգումով, աղօթելով որ ինք, լոյսը աշխարհի, խաւարի գործերը անհետացնէ եւ վերստին ծնի մեր եւ բոլոր մարդկութեան սիրտերուն մէջ:

Միացած իր Սուրբ Մօր եւ բոլոր սուրբերուն միջնորդութեամբ, կ'աղօթենք որ Ան օրհնէ Ձեզ լիսպէս, սիրելի եղբայր, ինչպէս նաեւ Ձեր Սուրբ Եկեղեցիի կղերականներն ու հաւատացեալ ժողովուրդը, լեցնելով Ձեզ սիրով, ուրախութեամբ եւ հաւատէն բխող խաղաղութեամբ:

Եղբայրական սիրով եւ ողջունիւ,

Ձեր եղբայրը ի Քրիստոս՝

ՄԻՔԱՅԷԼ

Արքեպիսկոպոս Քէմբըրջըրիի
եւ Առաջնորդ Համայն Անգլիայ

Պապական Արքեպիսկոպոսական Զատաստութիւն

Հռոմ

Հռոմ, 13 Դեկտեմբեր 1968

Ն. Ամենապատուութիւն

Տ. Նդիշէ Արքեպս. Տէրտէրեան

Պատրիարք Հայ Սրբաւսազէմի

Զերդ Ամենապատուութիւն,

Սուրբ Ծնունդի Տօնին առթիւ, երջանիկ եմք Ձեզի ներկայացնելու մեր ամենէն շքեմ մազթամբները:

Ծնունդի այս տօնախմբութիւնը մեզի ամզամ մը եւս կը յիշեցնէ աշխարհ գալը մեր Տիրոջ Յիսուս Գրիստոսի, զրկուած Հօր կողմէ՝ հաշտեցնելու սիրով մարդկութիւնը, կոչելով գտնոմք Իր Թագաւորութեան՝ Իր միակ Եկեղեցիին միջոցաւ. այդ Եկեղեցին մեզ կը կանչէ մտնաւանդ այս տարի, երբ մարդկութիւնը կը տառապի բազմաթիւ պայքարներէ, ազաչելու մեր ըզմանմանով եւ ազօքներով ի կատար ածումը այս մեծ նպատակին, շնորհիւ այն փոխադարձ սիրոյն՝ որ պիտի ցուցարբերուի ամանց կողմէ որոնք Յիսուս Գրիստոսի կը պատկանին եւ եղբայրներն են Անոր՝ ի հոգեւորս: Սիրոյ միջոցաւ բոլոր Բրիտանացիները միացնելու այս մեծ նպատակը մօտ է մասնաւորաբար Ձերդ Ամենապատուութեան սրտին, Դուք որ ոչ Ձեր ուժը եւ ոչ ալ առաջութիւնը կը սակարկէք անոր իրագործման համար: Թող երկնային նախախնամութիւնը Ձերդ Ամենապատուութեան շնորհէ գայն մեր Տիրոջ փափաքին համաձայն իրականացնելու համար անհրաժեշտ ուժն ու կորովը:

Պարտականութիւն կը զգամք մասնաւորաբար շնորհակալութիւն յայտնելու Ձերդ Ամենապատուութեան այն ազնիւ եւ հայրական ընդունելութեան համար, զոր հանցեալ շնորհիւ մեզի երբ այս տարուան գարնան հանդիպած էինք Սրբաւսազէմ:

Արևելեան Հաստատութիւնը, որ իրեն պարտականութիւն կը սեպէ հետեւիլ յաւիտ սղարցեալ Գարոնիակ Պէտրոսի գծած ուղիին, պիտի պատասխանէ Ձերդ Ամենապատուութեան ամենէն քանկագին փափաքներուն եւ միշտ պիտի փնտռէ այն ապահովագոյն միջոցները՝ որոնք կրնան առաջնորդել մեր Սուրբ Եկեղեցիներուն միջեւ երազուած կատարեալ հազորութեան եւ համերաշխութեան:

Կը խնդրենք որ Ձերդ Ամենապատուութիւնը հանի Միաբանութեան փոխանցելի մեր ամենէն անկեղծ մազթամբները ուրախութեան եւ յաջողութեան՝ միջնորդութեամբ մեր Տիրոջ:

Իվան Յիւզէֆ Յ. Կ.

Վերադասույ

ՅԵՌԱԳԻՐՆԵՐ

Երուսաղէմ, 29 Դեկտ. 1968

Ն. Ս. Օ. Տ. Տ.

Վազգէն Առաքին,
Կաթողիկոս Ամենայն Հայոց,
Ս. Էջմիածին.

Նոր Տարիի եւ Ս. Ծնունդի բարեբա-
տիկ առիթով, մեր ամուսնով, ինչպէս նաեւ
Սրբոց Յակոբեանց Միաբանութեան և տեղ-
ույն Հայ համայնքին կողմէ խոնարհաբար
Ձերդ Վեհապառուօթեան կը ներկայացնենք
մեր ամենէն անկեղծ շնորհատրութիւնները
եւ կ'աղօթենք առ Աստուած որ Ձերդ Սուրբ
Օծուօթեան շնորհ շարունակական քաջա-
նոզըութիւն եւ բազում երջանիկ տարիներ՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար յի յա-
ջողութեամբ եւ արդիւնատրութեամբ:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐԳ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Երուսաղէմ, 29 Դեկտ. 1968

Ն. Սրբութիւն

Պօղոս Զ.
Վատիկան.

Ս. Ծնունդի եւ Նոր Տարիի բարեբա-
տիկ առիթով, Ձերդ Սրբագնութեան կը
ներկայացնենք մեր անկեղծ շնորհատրու-
թիւնները, մաղթելով յարատեւ առողջու-
թիւն, եւ յաջողութիւն՝ Ձեր մեծ եկեղե-
ցիին: Թող Ամենակայն Աստուած յաջողու-
թեամբ պսակէ Ձեր սրբազան նիգերը:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐԳ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Երուսաղէմ, 29 Դեկտ. 1968

Ն. Սրբագնութիւն

Քէնքըրպըրիի Արքեպիսկոպոսին եւ
Առաջնորդին Համայն Անգլիայ,
Լոնտոն.

Ս. Ծնունդի եւ Նոր Տարիի բարեբա-
տիկ առիթով, կը ներկայացնենք մեր ան-
կեղծ շնորհատրութիւնները, Ձերդ Սըր-
բագնութեան եւ հաւատացեալներուն մաղ-
թելով երջանկութիւն, եւ մեր քոյր Անկլի-
ֆան մեծ եկեղեցիին՝ ամէն կարգի յաջո-
ղութիւն:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐԳ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Վատիկան, 7 Յունվար 1969.

Ն. Ամենապատուութիւն

Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտերեան,
Պատրիարք Հայ Երուսաղէմի.

Մինչ կը տօնենք Մեր Տիրոջ Ծնունդը,
շնորհակալութիւն կը յայտնենք Ձերդ Ամե-
նապատուութեան՝ Ձեր անկեղծ բարեմաղ-
թութիւններուն համար եւ կ'աղօթենք որ
խաղաղութեան եւ համերաշխութեան Տէրը
օրինէ Ձեզ, Ձեր Միաբանութիւնն ու ժողո-
վարդը:

ՊՕՂՈՍ Զ.

Քրիստոնէական Միութեան Քարտուղարութեան Նախագահ Օկիւսթին Գարտինալ Պէաչի վախճանման առթիւ փոխանակուած են հետեւեալ հեռագիրները Վատիկանի եւ Ս. Աթոսի միջեւ.

Վատիկան, 16 Նոյեմբեր 1968

Ն. Ամենապատուութիւն
Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Տխուր պարտականութիւնը ունիմ տեղեկացնելու Ձերդ Ամենապատուութեան որ Քրիստոնէական Միութեան Քարտուղարութեան Նախագահ Օկիւսթին Գարտինալ Պէա վախճանեցաւ այսօր: Յազարկատրութիւնը պիտի կատարուի Հռոմի մէջ, Նոյեմբերի 19-ին, ժամը 10-ին:

Խորին յարգանքներով, Ձերդ ի Քրիստոս

Ճօն Եպս. Ուիլլըպրանտ
Քարտուղար

Երուսաղէմ, 25 Նոյեմբեր 1968

Ն. Սրբութիւն
Պօղոս Վեցերորդ
Վատիկան

Խորապէս վշտացանք տեղեկանալով Ն. Սրբազնութիւն Օկիւսթին Գարտինալ Պէաչի վախճանումին; Կը յայտնենք մեր ամենէն անկեղծ վշտակցութիւնները: Թող Ամենակազն Աստուած յաւիտեանական իսազաղութիւն պարգեւէ իր հոգիին:

ԵՂԻՇԷ Բ.

ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Վատիկան, 27 Նոյեմբեր 1968

Ն. Ամենապատուութիւն
Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Սրբազան Հայրապետը զգացուած է Ձերդ Ամենապատուութեան վըշտակցութենէն եւ շնորհակալութիւն կը յայտնէ Ձեր ազօքմնբում համար:

Գարտինալ Զիֆօնեանի